ԵԴ/55383/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

09.11.2022թ. ք. Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Մազմանյանս ծանոթանալով <<Մայ Պրինտ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանի ընդդեմ պատասխանող ՀՀ դատական դեպարտամենտի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ՀՀ դատական դեպարտամենտի 24.10.2022թ.-ի կայացրած թիվ 5 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) և ՀՀ դատական դեպարտամենտի կողմից <<Մայ Պրինտ>> ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանգրի և որակավորման ապահովման միջոցների՝ տուժանքի մասին համաձայնագրերի գումարների գանձման ընթացքում գործընացը դադարեցնելու պահանջների մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Մայ Պրինտ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանը 26.10.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ պատասխանող Երևանի քաղաքապետարանի՝ երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ՀՀ դատական դեպարտամենտի 24.10.2022թ.-ի կայացրած թիվ 5 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) և ՀՀ դատական դեպարտամենտի կողմից <<Մայ Պրինտ>> ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանգրի և որակավորման ապահովման միջոցների՝ տուժանքի մասին համաձայնագրերի գումարների գանձման ընթացքում գործընացը դադարեցնելու պահանջների մասին.

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ. Մազմանյանի աշխատակազմին՝ 31.10.2022թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:

Միաժամանակ, հայցվորի ներկայացուցիչը միջնորդել է ձեռնարկել հայցի ապահովման միջոց, այն է՝ ժամանակավոր արգելել պատասխանող Երևանի քաղաքապետարանին կատարել ցանկացած այնպիսի գործողություն, որը կարող է հանգեցնել Կորյունի 5 հասցեում գտնվող և <<Մայ Պրինտ>> ՍՊ ընկերությանի կողմից զբաղեցված 9քմ մակերեսով հողամասից վերջինիս վտարելուն կամ այն օգտագործելուն և օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեություն իրականացնելուն որևէ կերպ խոչընդոտելը:

Դատարանը, քննարկելով միջնորդությունը, գտնում է, որ միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ 1/ պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը, 2/ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը, 3/ այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը, 4/ պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը, 5/ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը, 6/ պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը, 7/ օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման ինստիտուտի գործառույթներին և նշանակությանը: Մասնավորապես 30.07.2010թ. թիվ ԵՇԴ/0550/02/09 որոշմամբ, համադրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ, 98-րդ, և 101-րդ հոդվածները, ՀՀ Վճռաբեկ դատարանը դրանք մեկնաբանել է հետևյալ կերպ՝ «հայցի ապահովման դատավարական ինստիտուտի կարևորագույն նպատակն է ապահովելու և հայցվորի օրինական շահերը ցանկացած բացասական հետևանքներից պաշտպանելու համար»:

Թիվ ՎԴ/3511/05/10 գործով 27.04.2011թ. որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը:

Քննարկելով միջնորդությունը և հաշվի առնելով, որ հայցվորի ներկայացուցչի կողմից չեն ներկայացվել միջնորդությունը հիմնավորող ապացույցներ, փաստարկներ այն մասին, որ հայցի ապահովման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը, դատարանը գտնում է, որ միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 128-131-րդ, 165-րդ, 199-200-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Հայցադիմումն ընդունել վարույթ և նախապատրաստել դատաքննության՝ պատասխանողին ծանուցելով հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարգի մասին:

Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին, մերժել:

Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու մասով դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահին և ենթակա չէ բողոքարկման:

Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասով դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ